ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱԳՆԱ ՆԻՍՏԻ

11.04.2025թ. **ք. Ալավերդի**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա. Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝ Ս.Մակարյանը

Հրավիրված էին՝

ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանը, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ Ռ.Մարգարյանը, Մ.Դալլաքյանը, Ա.Թումանյանը, Ռ.Պողոսյանը, Կ.Ադամյանը, Ս.Մակարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Մատինյանը, Կ.Շեկոյանը, Ա.Հակոբյանը, Է.Հախվերդյանը, մարզի խորհրդի անդամները, իրավապահ մարմինների, ուժային կառույցների, հանրապետական գործադիր մարմինների մարզային ծառայությունների, առողջապահական հիմնարկների և համայնքների վարչական բնակավայրերի ղեկավարները, լրատվության ներկայացուցիչները:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2024 թվականի աշխատանքային գործունեության հաշվետվությունը.
(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետ Արամ Ղազարյան)
2. 2025թ. առաջին եռամսյակի Լոռու մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարման մասին.
(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մերի Դալլաքյան, 10 րոպե)
3. Տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության բնագավառում իրականացված աշխատանքների մասին.
(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Միեր Խեչումյան, 10 րոպե)
4. 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի և պետական բյուջեի միջոցներով իրականացվող աշխատանքների ընթացքի մասին.
(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռուբեն Մարգարյան, 10 րոպե)
5. Բուսաբուծության աջակցության 2025 թվականի պետական ծրագրերի մասին:
(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյան, 10 րոպե)
6. Այլ հարցեր:

Ելույթ ունեցան

1. Լոռու մարզպետ Արամ Ղազարյանը ներկայացրեց ՀՀ Լոռու մարզպետի 2024թ-ին կատարած աշխատանքների հաշվետվությունը, նշելով, որ 2024թ. լի էր ինչպես մարտահրավերներով, այնպես էլ ձեռք բերված հաջողություններով, որոնց իրագործման ուղղությամբ մարզպետի աշխատակազմի կողմից շարունակական աշխատանքներ են իրականացվել՝ նպատակ ունենալով բարելավել մարզի բնակչության կենսապայմանները, խթանել համայնքների համաչափ զարգացումը և տնտեսական աճը՝ ապահովելով հանրային և թափանցիկ կառավարում:

Լոռու մարզպետը ըստ առանձին ոլորտների ներկայացրեց մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների, ՀՀ Կառավարության օժանդակությամբ, ծրագրերով և միջոցներով, ինչպես նաև միջազգային կառույցների, գործընկերային և այլ կազմակերպությունների համագործակցությամբ իրականացված, ինչպես նաև 2025թ. և հետագա տարիների համար նախատեսված ծրագրերի իրականացման վերաբերյալ տեղեկատվություն:

Անդրադարձ կատարվեց նաև 2024թ. մայիսի 25-26-ին Լոռու մարզում տեղացած հորդառատ անձրևների հետևանքով առաջացած աղետի վնասների, ինչպես նաև դրանց հետևանքների վերացման և ազգաբնակչությանը օժանդակություն ցուցաբերելու ուղղությամբ ՀՀ Կառավարության, միջազգային կառույցների և այլ կազմակերպությունների կողմից տրամադրված օժանդակությունների վերաբերյալ բոլոր վերոնշյալ կառույցներից Աղետի գոտում իրականացված աշխատանքների, աղետի հետևանքների վերացման և Լոռու մարզում աղետի գոտու խնդրի վերջնական հաղթահարման ուղղությամբ նախատեսված աշխատանքների ու ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ. Դալլաքյանը ներկայացրեց 2025թ. առաջին եռամսյակի կտրվածքով մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ տեղեկատվություն՝ նշելով, որ պետք է անհրաժեշտ և հետևողական աշխատանքներ իրականացնել տեղական տուրքերի ու վճարների, ինչպես նաև գույքահարկի գանձման ուղղությամբ, օրինական բոլոր միջոցները ձեռնարկել սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների ապահովման ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Միեր Խեչումյանը ներկայացրեց տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության բնագավառում իրականացված աշխատանքների, ինչպես նաև առկա խնդիրների, հաճախակի հանդիպող թերությունների, սխալների և դրանց ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն: Վերջինս առաջարկեց համայնքների ղեկավարներին՝ միջոցներ ձեռնարկել համայնքների աշխատակազմերում նախորդ տարիների ընթացքում չտրամադրված արձակուրդների տրամադրման ուղղությամբ, ինչպես նաև անհրաժեշտ ուշադրություն դարձնել համայնքներից մարզպետարան ուղարկվող պաշտոնական

թղթակցությունների, գրությունների պատասխանների և որոշումների օրինականության պահանջների և ժամկետների պահպանմանը:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանը ներկայացրեց Լոռու մարզի համայնքների կողմից 2025թ. սուբվենցիոն ծրագրերի և պետական միջոցներով նախատեսվող և իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես նշելով, որ 2025թ. համար համայնքների կողմից ներկայացվել է 35 սուբվենցիոն ծրագրի ամբողջական փաթեթ, որոնք սահմանված կարգով ներկայացվել են վերադասի քննարկմանը և հաստատմանը:

5. Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանը ներկայացրեց «Բուսաբուծության աջակցության 2025 թվականի պետական ծրագրի» իրագործման վերաբերյալ տեղեկատվություն, մանրամասն պարզաբանելով գործընթացով սահմանված կարգը, մշակաբույսերի տրամադրման և գումարների փոխհատուցման կարգը, դրանց նկատմամբ մոնիտորինգի անցկացման ու ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն, հայտնելով, որ մշակաբույսերի ցանքը պետք է կատարվի մինչև 2025 թվականի հունիսի 1-ը, հատիկաընդեղենային մշակաբույսերինը՝ մինչև 2025 թվականի հունիսի 10-ը, իսկ աշնանացան ցորենինը՝ մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը, և, որ բոլոր ցանքերը պարտադիր պետք է իրականացնել բացառապես լաբորատոր փորձաքննություն անցած և հավաստագրված սերմերով, և որ պետական աջակցության փոխհատուցումը՝ յուրաքանչյուր շահառուի տրամադրվելու է մինչև 100 հա մակերեսով գյուղնշանակության հողերի համար:

Ներկայացված հաշվետվությունների և տեղեկատվության արդյունքներով՝ Լոռու մարզպետն առաջարկեց Լոռու մարզի համայնքների ղեկավարներին.

1. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ:

2. Հաշվի առնելով ներկայացված զեկույցների և հաշվետվության ընթացքում արված նկատառումները՝ միջոցներ ձեռնարկել առկա բացթողումներն ու թերությունները շտկելու և վերացնելու ուղղությամբ, միջոցներ ձեռնարկել ազգաբնակչության կողմից բարձրաձայնվող նկատելի դժգոհությունները բացառելու և վերացնելու, քաղաքացիների հետ տարվող աշխատանքները թափանցիկ, արդյունավետ իրականացնելու ուղղությամբ, հնարավորինս բացառել համայնքային թափուր պաշտոնների մրցույթների համալրման գործընթացում կողմնակալության և սուբյեկտիվիզմի դրսևորումը, պահպանել օրինականությունը և թափանցիկությունը:

3. Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել համայնքների ազգաբնակչության շրջանում գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումների ուղղությամբ Կառավարության քաղաքականությամբ որոշված ներկայացված աջակցության ծրագրերի պարզաբանման, ինչպես նաև դրանցում շահառուների առավել մեծ քանակի ներգրավման ուղղությամբ՝ ցուցաբերելով անհրաժեշտ օժանդակություն և աջակցություն:

4. Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել ըստ առաջնահերթությունների և հիմնավորվածության համայնքային խնդիրների լուծմանն ուղղված սուբվենցիոն ծրագրային

փաթեթները սահմանված ժամկետներում (այն է՝ մինչև ս.թ. մայիսի 5-ը) մարզպետարան ներկայացնելու ուղղությամբ:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

Ուսումնասիրել և 15-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ գյուղատնտեսության ոլորտի բարեփոխման և բարելավման ծրագրային ուղղությունների վերաբերյալ, հաշվի առնելով Լոռու մարզի առանձնահատկություններն ու իրագործման մեխանիզմները:

Եզրափակիչ ելույթ

Ամփոփելով մարզխորհրդի նիստը՝ մարզպետ Արամ Ղազարյանը շնորհակալություն հայտնեց մարզպետի աշխատակազմին, համայնքների ղեկավարներին և հանրապետական գործադիր մարմիններին, մարզային ծառայություններին և ներկաներին՝ մարզի զարգացմանն ուղղված արդյունավետ ու համագործակցային աշխատանքների համար, նշելով, որ այսօր ի պաշտոնե մեզ բախտ է վիճակվել ծառայելու մեր հանրությանը, սա մեծ առաքելություն է, որը մեզնից յուրաքանչյուրը պետք է իրականացնի բարձր պատասխանատվությամբ և պարտքի զգացումով: Նա մեկ անգամ ևս առանձնահատուկ շնորհակալություն հայտնեց ՀՀ կառավարությանը, բոլոր պետական կառույցներին, միջազգային ու հասարակական կազմակերպություններին, կամավորներին ջրհեղեղի հետևանքների վերացմանն ուղղված աշխատանքների և աջակցության համար:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2025-04-15 15:42:37 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99